

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՑ ՀԱԿՈԲՅԱՆՑ ՎԱՆՔԻ ԳԱՆՁԱՏԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ՏԵՂԸ

Լոնդոնում «Սոտբի» ընկերությունը մարտի 14-ին աճուրդի էր դրել հայկական քսաներեք արժեքավոր ձեռագրեր։

Փետրվարի 22-ին՝ շաբաթի օրը, Վեհափառ Հայրապետը *իմանալով հավաստի աղբյուրներից, որ աճուրդի դրված այդ ձեռագրերը ս. Հակոբյանց վանքի գանձատան ձեռագրերն են, նույն օրն իսկ հետևյալ բովանդակությամբ հեռագիր էր հղում Երուսաղեմ՝ ամենապատիվ տ. Եղիշե պատրիարքին։*

«Պաշտոնական տեղեկություն ստացանք, թե մարտի 14-ին, Լոնդոնի մեջ, աճուրդի կհանվին Ձեր վանքի գանձատան քսաներեք թանկարժեք հայկական ձեռագիրները, որոնց մեջ նաև երկու Ռոսլինները։

Մեր ձեռքի տակ է աճուրդի ծանուցագիրը, ուր նշված են ձեռագիրները իրենց թվականներով և նկարագրությամբ, որոնք ճշգրիտ կերպով կհամապատասխանեն Ձեր վանքի ձեռագիրներուն ցուցակին։

Կխնդրենք անմիջապես ստուգել Ձեր ձեռագիրները և հեռագրել Մեզի լուսաբանություն։

Եթե անոնք գողացված են, անհրաժեշտ է Ձեր կողմե անմիջապես և պաշտոնապես բողոք անգլիական պատկան իշխանություններուն՝ տեր կանգնելով ու պահանջելով ձեռագիրներուն վերադարձը Երուսաղեմ՝ Ձեզի։

Անձամբ Մենք և այստեղ մեծ հուզում։

Անհամբեր կսպասենք Ձեր հեռագրին»։

Մայր Աթոռ

Փետրվար 22

ՎԱՉԳԵՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՎԵՏԱՐԱՆ, ՌՈՍԼԻՆ, 1261, ՀՌՈՄԿԼԱ

Փետրվարի 27-ին՝ երկուշաբթի, *Մայր Աթոռում ստացվում էր* Եղիշե պատրիարքի *հետևյալ հեռագիրը* Վեհափառ Հայրապետին *ուղղյալ.*

«Տեղյակ դարձանք աղետալի լուրին, Կյուլպենկյան հիմնարկության միջոցով։ Տագնապի մեջ ենք և ձեռք կառնենք անհրաժեշտ միջոցներ, կանխելու դժբախտությունը և վերսին տիրանալու ձեռագիրներուն։

Կհաջողին նամակ»։

Երուսաղեմ
25 փետրվար

ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐՔ

Փետրվարի 28-ին Եղիշե պատրիարքից *ստացվում է հետևյալ հեռագիրը ուղղյալ* Վեհափառ Հայրապետին։

«Տակավին չենք գիտեր ձեռագիրներու անհետացման թվականը և պատասխանատու անձը։

Ձեռք առինք բոլոր հնարավոր միջոցները՝ կանգնեցնելու աճուրդը։ Շահե եպիսկոպոսը կմեկնի Լոնդոն փաստաբանով։ Ձեզ պիտի հեռաձայնենք»։

Երուսաղեմ
27 փետրվար

ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐՔ

Մարտի 5-ին՝ կիրակի օրը, Վեհափառ Հայրապետի *և* Երուսաղեմի պատրիարքի *միջև տեղի է ունենում հեռախոսային խոսակցություն ձեռագրերի մասին։*

Մարտի 7 թվակիր *իր հետևյալ հեռագրով երեքշաբթի օր* Եղիշե պատրիարքը *խնդրում էր* Վեհափառ Հայրապետին՝ *իր բարձր միջնորդությունը ի գործ դնել ծանոթ աղդայինների և կազմակերպությունների մոտ՝ հայթայթելու համար անհրաժեշտ գումարը Երուսաղեմի գանձատան ձեռագրերը աճուրդից փրկելու համար.*

«Կներկայացնենք մեր խնդրանքը կրկնելու Ձեր բարձր միջնորդությունը և հանձնարարությունը բարյացակամ անձանց և կազմակերպություններու մոտ, ընձեռելու իրենց կարևոր օժանդակությունը»։

Երուսաղեմ
Մարտ 7

ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐՔ

Վեհափառ Հայրապետը *ծանրորեն մտահոգ և ձեռագրերը փրկելու ցանկությամբ տոգորված, մարտի 8-ին կազմում է հինգ հոգուց բաղկացած մի հանձնաժողով և նրանց վրա պարտականություն է դնում ստուգել քսաներեք ձեռագրերի Երուսաղեմ վերադարձման հնարավորություններն ու պայմանները ու հայթայթել անհրաժեշտ գումարը աճուրդի դրված ձեռագրերը փրկելու համար։*

Նույն օրն իսկ Վեհափառ Հայրապետը *հեռախոսով հրահանգում է այս մասին Փարիզ,* տ. Սերովբե արքեպիսկոպոսին։

Վեհափառ Հայրապետը *մարտի 9-ին՝ հինգշաբթի օրը, հեռագրում է* Եղիշե պատրիարքին.

«Ընդառաջելով Ձեր հեռագրին, կազմեցինք հանձնաժողով. **Սերովբե արքեպիսկոպոս, Ալեքս Մանուկյան, Սիրարփի Տեր-Ներսեսյան, Երվանդ Հյուսիսյան, Նուբար Էքսերճյան**՝ ստուգելու քսաներեք ձեռագիրներու վերադարձման պայմանները, հայթայթելու գումարը և ձեռագիրները ապահով վերադարձնելու Ձեզի։

Այս առավոտ խոսեցանք Փարիզ՝ **Շահե եպիսկոպոսին,** այս մասին։ Կաշխատինք հաջողության համար»։

Մայր Աթոռ
9 մարտ

ՎԱԶԳԵՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Վեհափառ Հայրապետի հանձնարարությամբ կազմված վերոհիշյալ հանձնաժողովը անմիջապես հավաքվում է Լոնդոն և ձեռք առնում անհրաժեշտ միջոցները Երուսաղեմի վանքի ներկայացուցիչ տ. Շահե եպիսկոպոսի հետ, փրկում ձեռագրերը և վերադարձնում Երուսաղեմ՝ տ. Շահե եպիսկոպոսի ձեռքով։

Մարտի 11-ին՝ շաբաթ օրը, հանձնաժողովը Լոնդոնից հեռագրում է հետևյալը Վեհափառ Հայրապետին՝ ձեռագրերի վերադարձի մասին.

«Երջանիկ ենք Ձերդ Սրբության տեղեկացնելու, թե Շահե պիսկոպոս այս առավոտ կմեկնի Լոնդոնեն Երուսաղեմ՝ բոլոր ձեռագիրներով»։

11 մարտ
Լոնդոն

ՍԵՐՈՎԲԵ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԱԼԵՔՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԵՐՎԱՆԴ ՀՅՈՒՍԻՍՅԱՆ

Արդարև, ի մեծ ուրախություն և մխիթարություն Վեհափառ Հայրապետի և բովանդակ հայ ժողովրդին, որ ի հայրենի աշխարհ և ի սփյուռս, ձեռագրերը ապահով կերպով հասնում են Երուսաղեմ, ս. Հակոբյանց վանք, ձեռք առնված անմիջական ու միացյալ ջանքերի շնորհիվ։

Երուսաղեմի հայոց պատրիարք տ. Եղիշե արքեպիսկոպոսը ձեռագրերի Երուսաղեմ ապահով հասնելու բարի լուրը հաղորդում է Վեհափառ Հայրապետին կիրակի օր՝ մարտ 12 թվակիր իր հետևյալ հեռագրով.

«Կհղենք մեր երախտաշատ շնորհակալությունները Ձերդ Սրբության՝ անգնահատելի, տևական ջանքերու և վերաբերմունքի համար, մեր թանկագին ձեռագիրներու վերադարձման առթիվ։

Թող Ամենակարողը Ձերդ Սրբության պարգևե երկար կյանք, և հաջողություններ՝ Մայր Աթոռին։

Ձեռագիրները ապահով վերադարձված են։ Ակնածալից ողջույններ»։

Երուսաղեմ
12 մարտ

ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐՔ

Վեհափառ Հայրապետը հոգևին ուրախ, մարտի 15-ին՝ չորեքշաբթի օրը, հեռագրում է Եղիշե պատրիարքին.

«Կհաստատենք Ձեր 12 մարտ հեռագիրը։ Ուրախ ենք, որ միացյալ ճիգերով օտարացումեն փրկվեցան Ձեր գանձատան քսաներեք ձեռագիրները։

Բոլորիս սեպուհ պարտքն է, մեր կյանքի գնով իսկ ապահով պահպանել մեր ազգային մշակույթի սուրբ արժեքները։

Վստահ ենք, թե ամեն միջոց ձեռք կառնեք այդ նպատակով, Ձեզի նեցուկ ունենալով ս. Հակոբա հավատարիմ միաբանությունը։

Սխիթարվեցանք ձեռագիրներու վերադարձով, որով վերջ կգտնեն ամեն տարաձայնություն և տագնապ, և Ձեր Աթոռը կշարունակե իր կյանքը խաղաղ ու անվրդով։

Կշնորհավորենք Ձեզ, սիրով ողջունիվ»։

Մայր Աթոռ
15 մարտ

ՎԱԶԳԵՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՎԵՐԱԴԱՐՁՎԱԾ ՔՍԱՆԵՐԵՔ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Ստորև ներկայացնում ենք Երուսաղեմ վանք վերադարձված քսաներեք ձեռագրերի ցանկը ըստ «Սոտբի» ընկերության Լոնդոնում հրատարակած՝ 1967 թվականի ցուցակի (Catalogue of twenty-three important Armenian illuminated manuscripts).

1. **Աւետարան**, արծաթապատ, մագաղաթ, գրիչք՝ Աւետիս քահանայ և Ռաւլին (Թորոս), ստացող Լևոն թագաւոր, ի վերջն



ՀԵԹՈՒՄԻ ԱՎԵՏԱՐԱՆ, ՌՈՍԼԻՆ, 1268—69, ՀՌՈՄԿԼԱ

...ևոն թագաւորի և Կեռան թագուհւոյ պատ-...ներներով ՉԺ=1261 Հռոմկլայ:

(№ 105 և № 2660 Երուսաղեմի 1965 թվականին վերահիրատարակած ցուցակում, 1907-ին կազմված ցուցակի վրայից):

2. **Աւետարան,** արծաթապատ, մագաղաթ, ...տաղկող՝ Թորոս Ռաւլին, ստացող՝ Կոս-...ռանդին կաթողիկոս, նուիրուած իշխան Հե-...թումի: Հռոմկլայ ՉԺԷ=1268:

(№ 119 և № 3627 Երուսաղեմի ցուցակում):

3. **Աւետարան,** արծաթապատ, մագաղաթ, գրիչ՝ Աստուածատուր սարկաւագ Գազնուկ, ստացողք՝ Բարսեղ և Ստեփաննոս քահանայք, գրեալ ի Մամեստիա, ՉԻԴ=1275:

(№ 120 և № 3628 Երուսաղեմի ցուցակում):

4. **Աւետարան,** արծաթապատ, մագաղաթ, գրիչ՝ Գրիգոր քահանայ, ՉԾԶ=1307, Սիս:

(№ 11 և № 2565 Երուսաղեմի ցուցակում):

5. **Աւետարան,** արծաթապատ, գրիչ՝ Զաքար, ՊՂԳ=1444, Վարագ (Վան):

(№ 28 և № 2583 Երուսաղեմի ցուցակում):

6. **Աւետարան,** արծաթապատ, մագաղաթ, գրիչ՝ Մարտիրոս, ՉԺԳ=1464, Երուսաղեմ:

(№ 12 և № 2566 Երուսաղեմի ցուցակում):

7. **Աւետարան,** արծաթապատ, գրիչ՝ Մարտիրոս քահանայ, ՌԻԶ—Ը=1577—1579, ի Խիզան (Վան):

(№ 14 և № 2568 Երուսաղեմի ցուցակում):

8. **Աւետարան,** արծաթապատ, մագաղաթ, քարերով և մարգարտազարդ, գրիչ՝ Ղազար եպիսկոպոս, ՌԿԱ=1612, ի Հալեպ:

(№ 70 և № 2625 Երուսաղեմի ցուցակում):

9. **Աւետարան,** գրիչ՝ Յակոբ դպիր, ծաղկող՝ Յովհաննէս, ՌԿԷ=1618, ի Կ. Պոլիս, տուրք Նիկողայոս վանք:

10. **Աւետարան,** արծաթապատ, մագաղաթ, քարերով, ստացող՝ մահտեսի Ամիրազիզ, ՌՀԵ=1626, Երուսաղեմ:

(№ 71 և № 2626 Երուսաղեմի ցուցակում):

11. **Աւետարան,** գրիչ՝ Յովհաննէս քահանայ, ստացող՝ մահտեսի Տաւնապետ, ՌՂԷ=1647—8, Կ. Պոլիս:

(№ 52 և № 2607 Երուսաղեմի ցուցակում):

12. **Աւետարան,** նուէր սրբոց Յակոբեանց վանքին, 1648:

13. **Աւետարան,** արծաթապատ, մագաղաթ, քարերով, վաճառող Խոսրովին՝ Կարապետ վարդապետ, ՌՂԶ=1647, Կ. Պոլիս:

(№ 72 և № 2627 Երուսաղեմի ցուցակում):

14. **Աւետարան,** արծաթապատ, մագաղաթ, գրիչ՝ Յովհաննէս սարկաւագ, ՌՃԳ=1654, Կ. Պոլիս:

(№ 14 և № 2592 Երուսաղեմի ցուցակում):

15. **Աւետարան,** արծաթապատ, մագաղաթ, գրիչ՝ Խաչատուր երէց Կեսարացի, 1654, Կ. Պոլիս:

(№ 50 և № 2605 Երուսաղեմի ցուցակում):

16. **Աւետարան,** արծաթապատ, մագաղաթ, քարերով, գրիչ՝ Սարգիս Շորոթեցի, ՌՃԷ=1658, Նախիջևան:

(№ 80 և № 2635 Երուսաղեմի ցուցակում):

17. **Աւետարան,** կազմող՝ Կարապետ Ղալաթիացի, 1658, Երուսաղեմ:

18. **Աւետարան,** արծաթապատ, մագաղաթ, ստացող՝ մահտեսի Մարութա, 1660, Զմիւռնիա:

(№ 49 և № 2604 Երուսաղեմի ցուցակում):

19. **Աւետարան,** արծաթապատ, մագաղաթ, գրիչ՝ Գրիգոր երէց, 1686, Կեսարիա:

(№ 121 և № 3629 Երուսաղեմի ցուցակում):

20. **Աւետարան,** արծաթապատ, կազմող՝ Կարապետ Գանձակեցի, 1695—96:

21. **Աւետարան,** արծաթապատ, յիշատակող՝ խոճա Մինաս Զուղայեցի, ի յիշատակ իր դստեր՝ Զիբենի, 1735:

(№ 34 և № 2589 Երուսաղեմի ցուցակում):

22. **Աւետարան,** արծաթապատ, մագաղաթ, գրիչ՝ Աստուածատուր երէց, ՌՃԽԹ=1699—1700, Թոքատ (Եդոկիա):

(№ 79 և № 2634 Երուսաղեմի ցուցակում):

23. **Աւետարան,** ԺԸ դար: